ՔԱՐՈԶԽՕՍԱՔԱՂ

Տ. ՄՈՒՇԵՂ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԲԱԲԱՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՄԵԾ ՊԱՀՔԻ ՉՈՐՐՈՐԴ՝ ՏՆՏԵՍԻ ԿԻՐԱԿԻԻ ԱՌԻԹՈՎ

(3 մարտի, 2013թ.)

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

«Տո՛ւր իմաստութիւն ծառայի քո»
(Գ. Թագ. Գ. 9):

Պարզությամբ, խորությամբ առանձնացող այս խնդրանքն ու դիմումն առ Աստված մեծերին է հատուկ: Մեծեր, ովքեր իրենց գործով, կյանքով, գրչով եւ ինչու չէ, նաեւ սրով պատմություն են կերտել եւ սերունդներ դաստիարակել: Եւ ահա այսպիսի խնդրատուներից մեկն էլ ինքը՝ Սողոմոն արքան էր, Սողոմոն Իմաստունը, ով իր տեսակի մեջ միակն էր եւ իր խնդրանքների մեջ՝ ամենաժլատը:

Աստված ամենքին չէ, որ հայտնվում է եւ բոլորին չէ, որ խոսում է եւ առիթ տալիս ընտրելու: Սակայն այս կյանքում, սիրելինե՛ր, ամենքս էլ ազատ ենք մեր ընտրության մեջ եւ ամենքս էլ ազատ ենք Աստծուն ուղղելու մեր դիմումները, մեր հայցվածներն ու մեր խնդրանքները: Ընտրելու այդ հնարավորությունից էլ օգտվեց Սողոմոնը, երբ Աստված իր հոր գահը ժառանգած նոր թագավորին ասում է. «Ի՞նչ ես խնդրում Ինձանից, որ Ես պարգեւեմ քեզ: Սողոմոնը շատ չի երկարում, այլ ասում է. «Տո՛ւր ինձ իմաստություն, Տե՛ր, որպեսզի կարողանամ դյուրությամբ առաջնորդել իմ ժողովրդին» (Գ. Թագ. Գ. 9): Սա է Սողոմոնի ընտրությունը: Նա ընտրեց իմաստությունը: Երկարակեցության փոխարեն նա իմաստուն կյանքով ապրելը նախընտրեց: Դյուրին եւ հեշտ տրվող հաղթանակների փոխարեն իր հանճարով եւ ռազմական տաղանդով հաղթանակներ տանելը կամեցավ եւ անհամար հարստությունների փոխարեն՝ իր խելքով ու հնարամտությամբ հարստություն վաստակել կամեցավ: Իմաստությո՛ւնն էր Սողոմոնի ընտրությունը:

Վստահ եմ, որ այս տեսակ ընտրության հնարավորություն ուներ նաեւ տնտեսը, որին մեծատունն իր մոտ կանչեց եւ ասաց. «Տո՛ւր զհամար տնտեսութեան քո» (Ղուկ. ԺԶ. 2): Այսինքն՝ տնտեսությանդ հաշվետվությունը ներկայացրու: Նա, ով թեեւ ազատ էր, նա, ով թեեւ ամբաստանված էր, կարող էր ընտրել, ազնվորեն խոսել մեծատանն ու ասել. «Այո՛, թերեւս մեղավոր եմ, այո՛, վատնումներ եմ կատարել»: Սակայն նա ոչինչ չասաց, այլ վախեցած աշխատանքը կորցնելու հնարավորությունից՝ սկսեց ինքն

իրեն մտորել իր ապագայի մասին, սկսեց ինքն իրեն հարցեր տալ: Նա հարուստ չէր, ոչինչ չուներ, ինչպես երևում է ապագայի հանդեպ իր մտորումներից: Նա իր մտքում ասում է. «Գործել ոչ կարեմ, մուրանալ ամաչեմ» (Ղուկ. ԺԶ. 5): Այսինքն՝ աշխատել չեմ կարող, մուրալ էլ ամաչում եմ: Ի՞նչ անի ապա, որպեսզի մարդիկ իրեն ընդունեն: Եւ ահա չի ուշանում պատասխանը: Հնարամտությունը, որով նա երևի թե միշտ էլ փայլել էր, օգնության է հասնում: Նա կանչում է մեծատան պարտապաններին եւ զեղչում նրանց պարտքերը: Նա չի գրպանում զեղչվածը, չի վաճառում դրանք իր ապագան կերտելու համար՝ դրամ շահելու նպատակով: Նրան դրամը չի հետաքրքրում: Նա միայն մտահոգ է իր ապագայով: Արդյոք մարդիկ իրեն կընդունե՞ն որպես այդպիսին: Դա է նրան անհանգստացնողը:

Մարդկային փոխհարաբերություններում, շրջապատում եւ միջավայրում ընդունված լինելն էր նրան մտահոգողը եւ անհանգստացնողը: Թերեւս շատ քիչ կթվա նրա ցանկությունը, բայց երբ բաղդատենք յուրաքանչյուր մարդու ցանկությունը, թե նա որքանով է մտահոգ իր հեղինակությամբ, իր պատվով եւ դիրքով հասարակության մեջ, հասկանալի կլինի ամենքիս համար, թե ինչ է նրա ուզածը: Այն էլ այն դեպքում, երբ տեղի ունեցածն ամբաստանություն էր. «Եւ եղեւ զնմանէ ամբաստանութիւն», - ասում է Ավետարանը (Ղուկ. ԺԶ. 1): Ամբաստանությունը, ամբաստանված լինելը բացասական մի հանգամանք է, մի իրողություն, որը մարդուն պիտակավորում է շրջապատի մեջ՝ նրան տալով բացասական հատկանիշներ: Թերեւս տնտեսի մասին մեծատան մոտ ասվել էր. «Վատնող է, զեղծարար է, խարդախ, խաբող, շահամոլ»: Այս ամենը բացասական հատկանիշներ են: Եւ մինչ այդ ամենի կողքին ազնվությունը, բարությունը, խնայողությունը գերագույն արժանիքներ են հասարակության մեջ, մարդկության համար, որոնք պահպանելու համար ցայսօր մարդիկ միմյանց մարտահրավեր են նետում:

Այսպիսի մեղադրանքների դիմաց, անշուշտ, մեծատունը պետք է որ վռնդեր նրան աշխատանքից եւ պահանջեր հաշվետվությունը: Եւ հենց այդպես էլ վարվում է: Մենք տեսնում ենք տնտեսին, նորից իր մտորումների մեջ՝ կանչել է պարտապաններին եւ զեղչում է նրանց պարտքերի մի մասը: Մի իրականություն, որ շատ շատերի համար անհասկանալի կարող է թվալ: Դեպքը պարզ էր. ամբաստանության եւ սուտ վկայության արդյունքում մեծատունը կանչեց տնտեսին, նրանից հաշիվ պահանջեց եւ տնտեսը, զեղչելով պարտքերը, գնաց: Նրա հետագա կյանքը, նրա բախտը հայտնի չէ մեզ, սակայն գիտենք, որ մեծատունը գովեց նրան, որովհետեւ նա իմաստությամբ գործեց (Ղուկ. ԺԶ. 8): Տնտեսն ուղղամիտ մարդ չէր, սակայն խելացի էր եւ խորագետ, եւ մեծատունը գովեց ոչ թե արարքը, այլ այն միջոցը եւ ձեւը, ինչպես նա վարվեց, այսինքն՝ իմաստությունը, որ դրսեւորեց տնտեսը: Եւ ահա հանգուցալուծումը. «Անիրավ մամոնայից ձեզ բարեկամներ շահեցեք» (Ղուկ. ԺԶ. 9): Տեսնում ենք, որ Ավետարանիչն իր խոսքի մեջ տնտեսին անիրավ է կոչում՝ մեզ նախապես տրամադրելով նրա դեմ: Եւ ապա ասում է. «Անիրավ մամոնայից ձեզ բարեկամներ շահեցեք»: Մամոնան կամ դրամը ինքնին չար չէ, այլ չար է դառնում, երբ օգտագործվում է չար նպատակով: Եւ տեսնում ենք այսօր,

ԻԱ. դար, տեղեկատվության եւ պրակտիկ մտածելակերպի, աշխարհայնացման մի ժամանակաշրջան, երբ ամեն ինչ գրեթե առեւտրային փոխհարաբերություն է: Ի հաշիվ հանգստի, ի հաշիվ ազնվության, ի հաշիվ դիմացինին խաբելու՝ մարդիկ կարողանում են ինչ-որ նպատակներ իրականացնել եւ հասնել իրենց ուզածին: Դա է այսօրվա գերակշռող իրականությունը: Սակայն Աստված, որ ստեղծել է մարդուն, միշտ ասում է. «Կատարյա՛լ եղեք դուք, ինչպես որ ձեր երկնավոր Հայրն է կատարյալ» (Մատթ. Ե. 48): Ինչպե՞ս հասկանալ այդ ամենը, երբ ավետարանիչը Հիսուսի բերանով եզրափակում է առակն այսպես. «Այս աշխարհի որդիներն ավելի իմաստուն են, քան լույսի որդիները» (Ղուկ. ԺԶ. 8): Ինչպե՞ս կարող էր տնտեսը, որ անազնիվ էր մեծատան հանդեպ, ազնվություն ցուցաբերել ինքն իր եւ պարտապանների հանդեպ: Ինչպե՞ս կարող էր տնտեսը, որ խարդախ էր, խաբեբա, արդարացի գտնվել պարտապանների եւ իր իղձի հանդեպ: Դա է, որ այսօր մեր խորհրդածության, մեր մտածության առարկան պիտի դարձնենք: Թերեւս ամենքս էլ մեր կյանքի մեջ նմանատիպ իրավիճակներում հայտնվել ենք եւ յուրաքանչյուրս Աստծուց մի խնդրանք պիտի ունենանք, որպեսզի մեզ իմաստություն տա, որ կարողանանք ճիշտ որոշում կայացնել, որ միմիայն իմաստությամբ գործենք, որ ոչ թե Աստծուց տրված իմաստությունն օգտագործենք դրամ կուտակելով, վաստակելով եւ շահելով, այլ այն օգտագործելով, որպեսզի մեզ նմանին օգտակարություն բերենք եւ նրան նեցուկ լինենք:

Այս կյանքը, սիրելինե՛ր, մի տնտեսություն է: Մեզ բաժին հասած կյանքը մի տնտեսություն է, որի տնտեսները մենք ենք: Թե որքանով է հաջողվում մեզ իրականացնել եւ բարիք գործել՝ Աստծուն է միայն հայտնի, թե որքան ենք մենք կարողանում օգնել եւ օգտակարություն բերել՝ մարդիկ կարող են միայն վկայել: Եւ դատավորը՝ Աստված է եւ մեր խիղճը, եւ մենք մեր իղճի առջեւ պետք է միշտ մաքուր, մեր մեջ գտնվող պարզ ու վճիտ լինենք:

Եւ խնդրենք Տիրոջը, որպեսզի Նա, ինչպես որ Սողոմոն Իմաստունին իմաստություն տվեց, եւ աշխարհը մինչեւ հիմա ասում է «Իմաստուն Սողոմոն», ինչպես որ Տերը իմաստություն տվեց թե՛ տնտեսին եւ թե՛ մեծատանը, որպեսզի մեկն իմաստությամբ գործի՝ իրեն բարեկամներ շահելով եւ մյուսը՝ վերջում իմաստուն դառնա, այնպես էլ մենք իմաստություն խնդրենք Տիրոջը, որպեսզի միշտ իմաստությամբ խորհենք, խոսենք եւ բարիք գործենք այժմ եւ միշտ եւ հավիտյանս հավիտենից. ամեն: